

Ոչ պաշտոնական թարգմանություն

Պաշտոնական՝ անգլերեն

Նախնական տարբերակ

Բանաձև թիվ 1609 (2008)¹

**Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը
Հայաստանում**

1. 2008 թ. փետրվարի 19-ին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Չնայած որ դրանք “անցկացվեցին հիմնականում Եվրոպայի խորհրդի չափանիշներին համահունչ”, ընտրությունները դիտարկող Ժամանակավոր հանձնաժողովը արձանագրեց մի շարք խախտումներ և թերություններ, որոնցից ամենակարևորն էին. բոլոր թեկնածուների համար նախընտրական քարոզարշավի իրականացման ոչ հավասար պայմանները, ընտրական վարչարարության ոչ բավարար թափանցիկությունը և բողոքների ու գանգատների քննության գործընթացում բողոքաբերների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի չապահովումը: Բացի այդ, արձանագրեցին ընտրակեղծիքների մի շարք դեպքեր:

2. Խորհրդարանական վեհաժողովն ավստասանքով է նշում, որ նկատված խախտումները և թերությունները չնպաստեցին ընտրական գործընթացի նկատմամբ հանրության՝ առանց այն էլ խախտված վստահության մակարդակի բարձրացմանը, միաժամանակ հայաստանյան

¹ 2008թ. ապրիլի 17-ի Վեհաժողովի բանավեճը (16-րդ նստաշրջան) (Տես՝ see [Doc. 11579](#), Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից պարտավորությունների կատարման հանձնաժողովի (Մոնիտորինգի հանձնաժողով), համազեկուցողներ՝ պրն. Ժորժ Կոլոմբյե և պրն. Ջոն Պրեսկոտ): Փաստաթուղթն ընդունվել է Վեհաժողովի կողմից 2008թ. ապրիլի 17-ին, (16-րդ նստաշրջան):

հասարակության մի հատվածի շրջանում հարցեր առաջացնելով ընտրությունների արդյունքի վստահելիության կապակցությամբ: Հանրային վստահության պակասը հիմք դարձավ նախնական արդյունքների հրապարակմանը հաջորդած, թեև առանց նախապես պաշտոնական տեղեկացման, խաղաղ ցույցերի համար, որոնք տաս օրվա ընթացքում հանդուրժվում էին իշխանությունների կողմից:

3. Վեհաժողովը ցավ է հայտնում ոստիկանության և ցուցարարների միջև բախումների և 2008 թ. մարտի 1-ին բռնության սրացման կապակցությամբ, որի հետևանքով տաս հոգի զոհվեց և շուրջ երկու հարյուր մարդիկ՝ ստացան մարմնական վնասվածքներ: Մարտի 1-ի ողբերգական իրադարձություններին հանգեցրած բուն հանգամանքների, դրանց նկատմամբ իշխանությունների արձագանքի, այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-ից 20-ը Երևան քաղաքում արտակարգ իրավիճակ մտցնելու և ոստիկանության կողմից ենթադրաբար անհամաչափ ուժ գործադրելու հարցը լուրջ տարաձայնությունների տեղիք են տալիս և պետք է ենթարկվեն վստահելի և անկախ քննության:

4. Վեհաժողովը դատապարտում է բազմաթիվ անձանց, այդ թվում՝ ընդդիմության ավելի քան հարյուր համախոհների և խորհրդարանի երեք անդամների ձեռքակալումը և շարունակվող կալանավորումն այնպիսի մեղադրանքների հիման վրա, որոնցից մի մասը առերևույթ արհեստական են և պայմանավորված քաղաքական շարժառիթներով: Մա նշանակում է իշխանությունների կողմից ընդդիմության *փաստացի* հետապնդում:

5. Ողջունելի զարգացում էր այն, որ խորհրդարանում ներկայացված հինգ կուսակցություններից չորսը նորընտիր Նախագահ պրն. Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ 2008 թ. մարտի 21-ին ստորագրեցին համաձայնագիր քաղաքական կոալիցիա կազմավորելու մասին, որի նպատակն է լուծել ծառայած քաղաքական խնդիրները: Այնուհանդերձ, դեռևս անհրաժեշտություն կա երկխոսություն հաստատել կոալիցիայի և “Ժառանգություն” կուսակցության միջև, ինչպես նաև արտախորհրդարանական կուսակցությունների հետ՝ Հայաստանում ստեղծված ճգնաժամը հաղթահարելու համար:

6. Չնայած որ 2008 թ. մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների տեսքով իր կիզակետին հասած՝ հանրային վրդովմունքի պոռթկումը, թերևս, անակնկալ էր, Վեհաժողովը համարում է, որ ճգնաժամի հիմնարար և խորքային պատճառը պետության առանցքային ինստիտուտների անկարողությունն է՝ իրենց գործառույթները կատարելիս լիովին պահպանելու ժողովրդավարական չափանիշները և իրավունքի

գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները: Մասնավորապես.

6.1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն առ այսօր չի կարողացել կատարել իր հիմնական դերը, այն է՝ ծառայել որպես հարթակ տարբեր քաղաքական ուժերի միջև քաղաքական բանավեճի և փոխզիջումների ձևավորման համար: Առկա քաղաքական համակարգը, հիմնվելով “ամեն ինչ բաժին է հասնում հաղթողին” մոտեցման վրա, ըստ էության բացառում է ընդդիմության որևէ մասնակցություն որոշումների կայացման գործընթացին և երկրի կառավարմանը: Դրա արդյունքում Հայաստանի քաղաքական սպեկտրի մի զգալի մասը ներկայացված չէ ընթացիկ գումարման Ազգային ժողովում:

6.2. Ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության պակասն ընդհանուր առմամբ նսեմացնում է նաև ընտրությունների արդյունքների նկատմամբ հայաստանյան հանրության մի մասի վստահությունը: Խնդիրն ավելի է բարդանում՝ անկողմնակալ ընտրական վարչարարության բացակայության, ընտրական բողոքների և զանգատների անարդյունավետ քննության և քվեաթերթիկների հաշվարկի և արդյունքների աղյուսակավորման ընթացակարգերի ոչ բավարար թափանցիկության պատճառով:

6.3. Չնայած հաջողությամբ իրականացված օրենսդրական բարեփոխումներին, դատարանները դեռ չունեն անկախության անհրաժեշտ մակարդակ, որպեսզի հանրությանը վստահություն ներշնչեն իրենց՝ որպես անկողմնակալ դատական մարմինների նկատմամբ, այդ թվում՝ նաև ընտրական գործընթացում: Դրանով է բացատրվում ընտրությունների կապակցությամբ նրանց ներկայացված բողոքների սակավաթվությունը: Դատարանների ոչ բավարար չափով անկախ լինելու վկայություն է նաև այն փաստը, որ դատարանները, ըստ երևույթին, հարցականի տակ չեն առնում անձանց նախնական կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը և, որպես կանոն, բավարարում են դատախազների համապատասխան միջնորդությունները՝ հավուր պատշաճի քննության չենթարկելով այդ առնչությամբ ներկայացվող հիմնավորումները, ինչպես պահանջվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով,

6.4. Համարժեք դատական հսկողության բացակայության պայմաններում, անձանց ձերբակալությունը և շարունակվող կալանավորումը առերևույթ արհեստական մեղադրանքներով, նրանց՝ նախագահական ընտրությունների արդարացիությունը վիճարկելուց հետո կամ նախագահական ընտրություններից հետո ցույցերում նրանց մասնակցությունից հետո, մատնանշում է, որ այդ գործողությունները պայմանավորված են քաղաքական շարժառիթներով: Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դա անընդունելի է, և չի կարող հանդուրժվել Վեհաժողովի կողմից,

6.5. Թեև գոյություն ունի բազմակարծ և անկախ տպագիր մամուլ, իշխանությունների կողմից էլեկտրոնային լրատվամիջոցների և նրանց գործունեությունը կարգավորող մարմինների նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացիկ մակարդակը, ինչպես նաև՝ իսկապես անկախ և բազմակարծություն ապահովող հանրային հեռարձակողի բացակայությունը, խոչընդոտում են լրատվամիջոցների դաշտում բազմակարծության ձևավորմանը և խորացնում քաղաքական համակարգի նկատմամբ հանրության վստահության պակասի խնդիրը:

7. Արտակարգ իրավիճակի ավարտից մի քանի օր առաջ՝ 2008 թ. մարտի 17-ին, Ազգային ժողովը Կառավարության առաջարկով հրավիրված արտակարգ նիստի ընթացքում ընդունեց մի շարք փոփոխություններ “Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” օրենքում, որոնք էապես սահմանափակում են հավաքների ազատության իրավունքը և իշխանություններին մեծածավալ հայեցողական լիազորություններ վերապահում՝ արգելելու քաղաքական ժողովները և ցույցերը: Հետևաբար, դրանք հակասում են եվրոպական չափանիշներին, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածում, ինչպես նաև՝ խախտում Հայաստանի Հանրապետության՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետության պարտավորությունները և հանձնառությունները: Եվրոպայի խորհրդի Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նույնպես համատեղ եզրակացության նախագծում նշել են, որ այդ փոփոխություններն անընդունելի են: Վեհաժողովը ողջունում է նորընտիր Նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման խոսքում արտահայտված մտադրությունը ամբողջովին համապատասխանեցնել “Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” օրենքը եվրոպական չափանիշներին և խրախուսել այս հարցում Վենետիկի հանձնաժողովի հետ հետագա համագործակցությունը:

8. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վեհաժողովը, վերհիշելով իր 1532 (2007) քանաձևը Հայաստանի պարտավորությունների և հանձնառությունների կատարման վերաբերյալ, կրկին անգամ կոչ է անում Հայաստանի իշխանություններին՝ անհապաղ իրականացնելու հետևյալ բարեփոխումները.

8.1. Քաղաքական համակարգը պետք է պատշաճ տեղ և պատշաճ իրավունքներ ապահովի ընդդիմությանը,

8.2. Ընտրական գործընթացն անհրաժեշտ է հիմնովին բարեփոխել՝ նպատակ հետապնդելով ապահովել, մասնավորապես, ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմինների անկախությունը և ազատությունը որևէ քաղաքական ուժի հսկողությունից, ընտրական գործընթացի վարչարարության լիակատար թափանցիկությունը, հատկապես քվեաթերթիկների հաշվարկի և արդյունքների աղյուսակավորման գործընթացների առումով, բողոքարկման և գանգատարկման այնպիսի համակարգ, որում ընտրական գործընթացի մասնակիցները հնարավորինս լիարժեքորեն կկարողանան իրավական պաշտպանություն ստանալ ենթադրյալ ընտրախախտումների դեպքում, ինչպես նաև գործնականում հավասար հնարավորություններ երաշխավորել քաղաքական բոլոր ուժերին թե պաշտոնական քարոզարշավի ընթացքում, թե դրան նախորդող ժամանակահատվածում,

8.3. Պետք է երաշխավորել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաև Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անկախությունը քաղաքական շահերից: Բացի այդ, պետք է վերանայել նշված մարմինների կազմավորման կարգը՝ երաշխավորելու դրանցում հայաստանյան հասարակության իրական ներկայացվածությունը: Այս ոլորտում Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի փորձագետների առաջարկությունները պետք է ի վերջո հաշվի առնվեն: Վեհաժողովը կրկնում է, որ օրենսդրությունը բարեփոխելուց զատ, իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու հանրային հեռուստատեսության և ռադիոյի անկախությունը և բազմակարծությունն առօրյա գործունեության մեջ: Բացի այդ, պետք է դադարեցնել հարկային մարմինների ճնշումներն ընդդիմադիր էլեկտրոնային և տպագիր լրատվամիջոցների նկատմամբ,

8.4. Հավաքների ազատությունը պետք է երաշխավորել թե օրենքով, թե գործնականում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածին համահունչ. այդ կապակցությամբ

անհրաժեշտ է, որպեսզի “Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” օրենքում Ազգային ժողովի կողմից վերջերս կատարված փոփոխություններն անմիջապես ուժը կորցրած ճանաչվեն՝ համապատասխան Վենետիկի հանձնաժողովի առաջարկներին:

8.5. Իշխանությունները պետք է նոր թափ հաղորդեն դատական համակարգի իրական անկախությունը երաշխավորելու և դատարանների նկատմամբ հանրության վստահության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ իրենց կողմից գործադրվող ջանքերին,

8.6. Պետք է բացառել կամայական ձերբակալումները և կալանավորումները, ինչպես նաև կալանավորվածների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի երևույթները, հատկապես՝ ոստիկանությունում պահվելու ընթացքում: Թե օրենքով, թե պրակտիկայում պետք է երաշխավորել ոստիկանության գործունեության նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետ մեխանիզմ:

9. Ընդդիմադիր բոլոր ուժերն իրենց հերթին պետք է ճանաչեն Սահմանադրական դատարանի որոշումը, որով հաստատվեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայտարարած՝ ընտրությունների արդյունքները: Դա չպետք է մեկնաբանել որպես դատարանի որոշման էության հետ համաձայնվելու պարտավորություն: Ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներն իրավունք ունեն վիճարկել այդ որոշումն իրենց հասանելի իրավական միջոցներով, այդ թվում՝ Ստրասբուրգում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

10. Վեհաժողովը կարծում է, որ վերոհիշյալ՝ հրատապորեն անհրաժեշտ բարեփոխումներն իրագործելու և Հայաստանին առաջ շարժվելու հնարավորություն տվող միակ ուղին հայ հասարակության քաղաքական ուժերի միջև բաց և կառուցողական երկխոսության նախաձեռնումն է: Ավելի քան մեկ տարի առաջ Վեհաժողովը 1532 (2007) բանաձևում արդեն ընդգծել է այդպիսի երկխոսության՝ որպես սահմանադրական բարեփոխումների արդյունավետ իրականացման նախադրյալի անհրաժեշտությունը:

11. Հաշվի առնելով, որ Հայաստանում քաղաքական սպեկտրի համապատասխան մասը ներկայացված չէ ընթացիկ գումարման Ազգային ժողովում, այդ երկխոսությանը պետք է մասնակցեն թե խորհրդարանական, թե արտախորհրդարանական քաղաքական ուժերը: Վեհաժողովը պատրաստ է հանդես գալ որպես միջնորդ տարբեր ուժերի միջև և ապահովել Եվրոպայի խորհրդի փորձագիտական մարմինների, հատկապես՝ Վենետիկի հանձնաժողովի ներգրավումն այս գործընթացին:

12. Այնուամենայնիվ, Վեհաժողովը գտնում է, որ նման երկխոսության մեկնարկի և հաջողության համար անհրաժեշտ է առաջնահերթ կարգով ապահովել մի շարք պայմաններ, որոնք կնպաստեն ընդդիմության կողմից վստահության ամրապնդմանը և կհիմնավորեն իշխող մեծամասնության՝ հետագա բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամության լրջությունը.

12.1. Պետք է անհապաղ իրականացնել մարտի 1-ի իրադարձությունների և դրանց հանգեցրած հանգամանքների, ներառյալ՝ ոստիկանության կողմից ենթադրաբար անհամաչափ ուժ գործադրելու և ցուցարարների գործադրած բռնության երևույթների անկախ, թափանցիկ և վստահելի հետաքննում: Միջազգային հանրությունը պետք է պատրաստ լինի մոնիտորինգի ենթարկել և աջակցել նման հետաքննության անցկացմանը,

12.2. այն անձինք, ովքեր կալանավորվել են առերևույթ արհեստական և քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով կամ նրանք, ովքեր անձնապես չեն կատարել որևէ բռնի գործողություն կամ դրա հետ կապված լուրջ հանցանքներ, պետք է անհապաղ ազատ արձակվեն,

12.3. “Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում Ազգային ժողովի կողմից վերջերս կատարված փոփոխությունները և լրացումները պետք է անհապաղ ուժը կորցրած ճանաչվեն՝ համապատասխան Վենետիկի հանձնաժողովի առաջարկների:

13. Եթե վերոհիշյալ պայմանները չապահովվեն, և եթե Հայաստանում քաղաքական ուժերի միջև լրջորեն չծավալվի բաց երկխոսություն վերոհիշյալ 8-րդ կետում նշված բարեփոխումների վերաբերյալ, ապա կասկածի տակ կհայտնվի Հայաստանի՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետության վստահելիությունը: Ուստի, Վեհաժողովը պետք է 2008 թ. հունիսյան նստաշրջանի բացման ժամանակ դիտարկի Վեհաժողովում Հայաստանի պատվիրակության՝ քվեարկելու իրավունքները կասեցնելու հնարավորությունը, եթե մինչ այդ վերոնշյալ պահանջների ուղղությամբ ձեռք բերված չլինի զգալի առաջընթաց:

14. Վեհաժողովը կշարունակի ուշադրությամբ հետևել Հայաստանում տիրող իրավիճակին՝ Դիտարկման հանձնաժողովի կողմից տրամադրվող տեղեկությունների հիման վրա, հատկապես՝ վերոհիշյալ նախապայմանների բավարարման ուղղությամբ առաջընթացի առումով: